Ս.ԵՐՎԱՆԴՅԱՆ

Հոկտեմբերի սկզբին Ադրբեջանում հրատարակվող «Ուչ նոգտա» թերթի քաղաքական մեկնաբան Ֆազիլի ստորագրությամբ լույս տեսավ «Պուտինի ժեստերը չեն սփոփում Ադրբեջանին» հոդվածը:



Մոսկվան կհավատա՞ արցունքներին

Նյութը վերաբերում էր ՀՀ նախագահի Մոսկվա կատարած այցին: «Հայաստանի նախագահի սառը ընդունելությունը Մոսկվայում դիտորդները գնահատել են որպես Պուտինի ժեստ Ադրբեջանի նկատմամբ: Պուտինն իբր այդ ժեստը արել է այն տպավորությունը գործելու նպատակով, թե Ռուսաստանը միատեսակ հայացքով է նայում Հարավային Կովկասի իրար հետ հակամարտող երկու պետություններին»: Բնականաբար, ադրբեջանցի մեկնաբանն այս այցին անդրադարձել է ԼՂՀ հակամարտության եւ Երեւան-Մոսկվա-Բաքու հարաբերությունների տեսանկյունից: Մեկնաբանելով, այսպես ասած, «Պուտինի ժեստը» Բաքվի խոսափողը եզրակացնում է, թե «դժվար է ենթադրել, որ Ադրբեջանը կգնահատի այդ ժեստը հատկապես այն դերի համատեքստում, որ Ռուսաստանը խաղացել է Ղարաբաղի հակամարտության գործում»: Ինչ վերաբերում է Մոսկվա-Բաքու հարաբերություններին, ապա սկզբից եւեթ ենթադրվում է, որ «Ադրբեջանում լավ են հասկանում իրենց Մոսկվայի վասալը տեսնելու Ռուսաստանի ցանկությունը»:

«Ուչ նոգտա» թերթի այս անդրադարձին մեկ շաբաթ անց հետեւեց «Նեզավիսիմայա գազետա» ռուսաստանյան պարբերականում Մոսկվայում ադրբեջանական համայնքի նախագահ Մամեդ Բաղիրովի ելույթը: Այս անգամ եւս հոդվածի նյութը վերաբերում է ՌԴ եւ ՀՀ նախագահների հանդիպմանը եւ դարձյալ Արցախյան հակամարտության եւ երեք երկրների հարաբերության տեսանկյունից: Այս անգամ, սակայն, խնդիրը մեկնաբանվում էր ավելի համակողմանի, եւ շեշտադրումներն արվում էին որոշակիորեն կրելով գրեթե վերջնագրային բնույթ:

Այսպես. արձանագրելով, թե Մոսկվայի պնդմամբ ՀՀ-ՌԴ ռազմավարական համագործակցությունը ուղղված չէ որեւէ երրորդ երկրի դեմ, եզրակացվում է. Բաքուն դա չի կարող ընդունել, որովհետեւ առկա է Երեւան-Բաքու զինված հակամարտության վիճակը եւ Մոսկվայի ռազմաքաղաքական աջակցությունը Երեւանին (Բաքվի հետ այդ ոլորտում որեւէ հարաբերության բացակայության պայմաններում) օբյեկտիվորեն ամրապնդում է հակամարտ կողմերից մեկին:

Բաքվի շահերին սպառնացող գերագույն վտանգը, սակայն, ըստ հեղինակի, Ադրբեջանը տեսնում է ԼՂ հարցում Մոսկվայի որդեգրած նոր մոտեցումից: Ըստ այդմ, Մոսկվան, ողջունելով Բաքու-Երեւան երկխոսությունը, պատրաստ է փոխհամաձայնության դեպքում դառնալ երաշխավոր կողմ: Պուտինի այն հայտարարությունը, թե «Ռուսաստանը հատուկ իրավունքներ չունի ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում» եւ նման կարծիքը «կայսերապաշտական մտածողության ռուդիմենտ է», գրեթե հուսահատ կատաղության է հասցնում ադրբեջանական կողմին:

«Նշանակո՞ւմ է այդ հայտարարությունն արդյոք, թե կողմերի անհամաձայնության դեպքում Ռուսաստանը կառաջարկի Հայաստանին ձեռնտու եւ Ադրբեջանի համար ստորացուցիչ ստատուս-քվոյի պահպանմամբ հաշտության բանաձեւ»: Հռետորական այս հարցումը, իհարկե, ենթադրում է որոշակի եզրահանգում: «Պատահական չէ, որ պարոն Քոչարյանի դիրքորոշումն, ըստ էության, համընկավ Կրեմլի դիրքորոշման հետ», ահա առանցքային միտքը, որ կարմիր թելի նման անցնում է ողջ նյութում: Ըստ ադրբեջանցի հեղինակի, Մոսկվան այժմ որդեգրել է ճիշտ նույնպիսի դիրքորոշում Արցախյան հարցի նկատմամբ, ինչպես Երեւանը, երբ ասում է, թե «սույն խնդիրը Բաքվի եւ Ղարաբաղի փոխհարաբերությունների հարցն է» եւ Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման խնդիրը: «Մենք այստեղ որեւէ գործ չունենք,- մինչ այժմ հայտարարում են Հայաստանի ղեկավարները,- մենք միայն Ղարաբաղի իշխանություններին ենք փոխանցում Ռուսաստանից ստացված զենքը, տեխնիկան, նրանց համար տպում ենք դրամանիշեր, ամրապնդում բյուջեն, վերաբնակեցնում Ղարաբաղի տարածքը, որը դե յուրե Ադրբեջանի կազմում է, սակայն այդ ամենն արվում է օրինականորեն երկկողմանի համաձայնագրերի հիման վրա»,- հեգնում է Մամեդ Բաղիրովը:

Որպես հետեւություն, ըստ էության, Բաքվին առաջարկվում է իրավիճակը շտկելու նպատակով փոխել մարտավարությունը եւ որդեգրել հետեւյալ բանաձեւին համարժեք քաղաքականություն. «Պետք է հույս դնել ոչ թե Մոսկվայի, այլ Մոսկվայի հետ համագործակցության եւ սերտ կապերի վրա»: Ասել է թե Բաքուն պատրաստ է վերանայել աշխարհաքաղաքական եւ ռազմավարական իր դիրքորոշումն ու ուղեգիծը: Ի՞նչ է սա. դիվանագիտական բառապաշարում հայտնի «թուրքական բարձի» հերթական առաջա՞րկ, թե՞ արմատական փոփոխություն: Եվ որքանո՞վ դա լուրջ ընկալվեց Մոսկվայի կողմից: Այս հարցերի պատասխաններն այսօր մասամբ հայտնի են, սակայն դա այլ խոսակցության նյութ է: